

Կ Ա Ր Ծ Ի Ք

Արամայիս Սպարտակի Սիմոնյանի «Ավագ դպրոցում «Մոլեկուլային ֆիզիկա» և «Ջերմային երևույթներ» բաժինների դժվար յուրացվող թեմաների դասավանդման մեթոդիկան» խորագրով ատենախոսության վերաբերյալ ներկայացված ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Արամայիս Սիմոնյանի ատենախոսության թեման արդիական է, քանզի ավագ դպրոցի ֆիզիկայի խորացված ուսուցման հոսքերի համար նախատեսված թեմաները առաջին անգամ են ուսուցանվում դպրոցական ծրագրի շրջանակներում և մինչ օրս հետազոտության շրջանակներում «Մոլեկուլային ֆիզիկա» և «Ջերմային երևույթներ» բաժնից ընտրված թեմաների համակարգված դասավանդման մեթոդիկա մշակված չէ:

Հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան և գիտական վարկածը ընտրված և ձևակերպված են հստակ և արտահայտում են հետազոտության թեման:

Ատենախոսության նպատակը, գիտական վարկածը, օբյեկտը և առարկան տրամաբանորեն բերել են հետազոտության հիմնական խնդիրների առանձնացմանը:

Կարելի է պնդել, որ հետազոտության հիմնական խնդիրների լուծումը ատենախոսն իրագործել է:

Իրականացված մանկավարժական գիտափորձի համար մշակված մեթոդիկան մատչելի է և կիրառության համար արդյունավետ:

Առաջադրված խնդիրների պատշաճ լուծման արդյունքում հաստատվել է գիտական վարկածը, իսկ համապատասխան եզրակացությունները արտացոլում են խնդիրների բովանդակությունը:

Ատենախոսությունը ավարտուն հետազոտություն է, որն ունի տրամաբանական հստակ կառուցվածք. ատենախոսության գլուխներն ու պարագրաֆները կազմում են մեկ ամբողջություն՝ լրացնելով և հաջորդելով միմյանց:

Ատենախոսության մեջ տեղ գտած հավելվածները լրացնում են հետազոտությունը:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից և տասնմեկ պարագրաֆներից: Առաջին գլխում ներկայացված են «Մոլեկուլային ֆիզիկա և ջերմային երևույթներ բաժինների ուսուցման մեթոդաբանական և մեթոդական հիմքերը», բաժինների դասավանդմանը նվիրված ատենախոսությունների, մանկավարժական, հոգեբանական գրականության, դասագրքերի և թեմային առնչվող այլ աղբյուրների վերլուծությանը, որի օգնությամբ ատենախոսը փորձել է հիմնավորել թեմայի արդիականությունը:

Երկրորդ գլխում ներկայացված են ավագ դպրոցի 11-րդ դասարանի ֆիզիկայի դասագրքի «Ֆիզիկայի» ընդհանուր և խորացված ուսուցմամբ հոսքերում «Մոլեկուլային ֆիզիկա» և «Ջերմային երևույթներ» բաժիններից ընտրված թեմաների ուսուցման համար մշակված մեթոդիկան: Մասնավորապես, անդրադարձ է եղել հետևյալ թեմաներին՝ «Իդեալական գազի ճնշման հաշվման», «Մաքսվելյան բաշխումը», «Ներքին էներգիա», «Աշխատանք», «Ջերմաքանակ», «Ջերմադինամիկայում աշխատանք հասկացության ընդհանրացումը», «Ջոուլի փորձը», «Ջերմադինամիկայի առաջին օրենքը» և «Ջերմունակություն»:


Երրորդ գլուխում ներկայացված են մանկավարժական գիտափորձի անցկացման մեթոդիկան և արդյունքների վերլուծությունները:

Հետազոտության գլուխներն ու պարագրաֆներն ունեն համակարգված կառուցվածք և արտացոլում են ատենախոսության խնդիրների լուծումները:

Ատենախոսությունը զերծ չէ թերություններից, սակայն պետք է նշել, որ նշված թերությունները էապես չեն ազդում ատենախոսության ընդհանուր դրական գնահատականի վրա:

- Հետազոտությունը իրականացվել է 2012-2016թթ.-ի ընթացքում: Ատենախոսությունում նշված չէ որևէ անդրադարձ վերջին 6 տարիների ընթացքում թեմաներին առնչվող ուսումնասիրությունների վերաբերյալ: Ուստի որքանով են հետազոտության թեմաները և արդյունքը արդիական այսօր:
- Գրականության ցանկում նշված աղբյուրների գերակշիռ մասը հայկական և ռուսական գրականություն է: Մինչդեռ հարկավոր է ուսումնասիրել նաև արևմտյան գրականությունը, հոդվածները և թեմային առնչվող այլ աղբյուրներ, որպեսզի առաջարկված մոտեցումները համահունչ լինեն ուսուցման արդի պահանջներին:
- Երրորդ գլխում նշված է, որ ստուգիչ թեստն անցկացվել 11-րդ դասարանում, այսինքն՝ կարող ենք եզրակացնել, որ աշակերտները մոտ երեք ամիս անց՝ արձակուրդից հետո են գրել թեստը: Նշված չէ, որ աշակերտներին հանձնարարվել է կրկնել նախորդ մեկ տարվա թեմաները, ուստի որքանով է ստուգիչ թեստը արտացոլում աշակերտների իրական գիտելիքները և հմտությունները, որն էլ էական հիմք է հանդիսացել փորձարարական և ստուգիչ դասարանների բաժանման համար:

Եզրակացություն. Արամայիս Սպարտակի Սիմոնյանի «Ավագ դպրոցում «Մոլեկուլային ֆիզիկա» և «Ջերմային երևույթներ» բաժինների դժվար յուրացվող թեմաների դասավանդման մեթոդիկան» խորագրով ատենախոսության արդյունքները գիտական նորույթ են և ունեն գործնական մեծ արժեք: Այն իրենից ներկայացնում է ավարտուն և ինքնուրույն գիտամեթոդական աշխատանք: Ատենախոսությունը համապատասխանում է ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ թվանիշին, բավարարում է ԲՈԿ-ի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Խ. Արվյանի անվան ՀՊՄՀ հենակետային վարժարանի
(Ավագ դպրոցի) ֆիզիկայի ուսուցիչ,
մանկավարժական գիտությունների թեկնածու՝  Հ. Օհանյան

Հրայր Օհանյանի ստորագրությունը
հաստատում եմ՝ Խ. Արվյանի անվան
ՀՊՄՀ-ի գիտական քաղաքագրար՝





Մ. Իսախրյան
15.04.2022թ.